ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՑ ՄԵՐՈՑ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿԱՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
ԱՆԴԱՄՈՑՆ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅՆ
ԿԱՆԱԴԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ, ՈՐ ՅՕԹԱՎԱ, ԿԱՆԱԴԱ

Կանադայի Հայոց Թեմի տարեկան Պատգամաւորական ժողովի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում Թեմական Առաջնորդ Գերաշնորհ Տ. Աբգար եպիսկոպոս Հովակիմեանին և հոգևոր ուխտապահ դասին, Թեմական Խորհրդի պատուարժան անդամներին ու ժողովի բոլոր մասնակիցներին:

Գոհութիւն ու փառք ենք մատուցում Բարձրեալն Աստծուն, որ Կանադայում բնակուող մեր ժողովրդի զաւակները տասնամեակներ շարունակ հոգևոր ու ազգային ինքնութեան մշտարթուն գիտակցութեամբ իրենց համայնքային կեանքը կազմակերպում են Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու առաջնորդութեան ներքոյ: Կանադայի Հայոց Թեմում արձանագրուած յաջողութիւնները հաւատաւոր հայորդեաց եկեղեցասիրութեան ու ազգասիրութեան բարի վկայութիւններն են և նուիրեալ ու նախանձախնդիր ծառայութեան օրինաբեր արդիւնքները, որոնք արժանի են բարձր գնահատանքի: Մեզ համար գոհունակութիւն է, որ այսօր դուք շարունակում էք ձեր հայրերի օրինակով ջանքեր բերել՝ միասնականութեան մէջ յաղթահարելու բոլոր խնդիրներն ու դժուարութիւնները և առաւել պայծառութիւն յաւելելու թեմական կեանքին:

Սիրելի զաւակներ Մեր, ինչպէս գիտէք, 2019 թուականը մեր Եկեղեցում հռչակուած է Ընտանիքի տարի: Մեր ժողովրդի ընտանեական արժեհամակարգը ձևաւորուած է սուրբ գրային պատգամների ու քրիստոնէական մեր հաւատի ուսուցումների հիման վրա: Հայ ընտանիքներում են մեր մանուկները ճանաչել Աստծուն ու աղօթել սովորել, դաստիարակուել ազգային ու հոգևոր շնչով և ձևաւորուել բարին արարելու կամքով: Աստուծոյ առատ օրհնութեամբ կազմուած հայ ընտանիքը դարեր շարունակ եղել է և կայ անխորտակ հիմքը ու ամուր պատուարը մեր հասարակութեան և բիւրեղեայ ակունքը ազգային կեանքի յարատևութեան:

Սիրեցեալ զաւակներ Մեր, այսու Մեր յորդորն է ձեզ, որ թեմական գործունէութեան առաջիկայ ծրագրերում առանձնակի տեղ ու կարևորութիւն ընծայէք ընտանիքին նուիրուած միջոցառումներին: Յատկապէս ջանացէք նոր սերնդին համախմբել մեր Եկեղեցու շուրջ և նրանց հոգիներում արմատաւորել ընտանիքի վերաբերեալ մեր ազգային ընկալումները, որպէսզի հայ ընտանիքները շարունակեն կրողն ու փոխանցողը լինել ազգային ու հոգևոր անանց արժէքների և մնան ամրօրէն կապուած մեր Սուրբ Եկեղեցուն:

Պատգամաւորական ժողովի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու գնահատանքն ենք յղում Կանադայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Արգար Եպիսկոպոս Յովակիմեանին և թեմի հոգևոր դասին՝ մաղթելով Տիրոջ զօրակցութիւնը կանադահայ Մեր զաւակներին սպասաւորելու նուիրական կոչման մէջ:

Գոհունակ սրտով Մեր օրհնութիւնն ենք յղում Թեմական ու Ծխական խորհուրդների պատուարժան անդամներին ու Պատգամաւորական ժողովի բոլոր մասնակիցներիդ: Սիրելի զաւակներ Մեր, բարձրօրէն գնահատում ենք, որ ձեր ժամանակն ու կարողութիւնները սիրով ծառայեցնում էք Կանադայում մեր Սուրբ Եկեղեցու առաքելութեան արդիւնաւորմանը: Ձեր եկեղեցանուէր ընթացքով դուք նաև բարի օրինակ էք հայորդեաց համար՝ առաւել գործուն մասնակցութիւն բերելու և յանձնառութիւններ ստանձնելու մեր ժողովրդի ազգային ու հոգևոր կեանքի կազմակերպման գործում:

Պատգամաւորական այս ժողովին, համաձայն թեմական կանոնադրութեան, դուք պիտի կատարէք նաև թեմական Առաջնորդի ընտրութիւնները: Աղօթքով առ Աստուած Սուրբ Հոգու առաջնորդութիւնն ենք հայցում ձեզ պատասխանատու այս առաքելութեան մէջ՝ ի նպաստ Կանադայի Հայոց Թեմի շինութեան ու առաւել պայծառութեան:

Մեր սէրն ու օրհնութիւնն ենք յղում Կանադայում բնակուող մեր ժողովրդի զաւակներին և մաղթում Բարձրեալն Աստուծոյ երկնաւոր շնորհները: Թող Տէրը միշտ հաստատ պահի Կանադայի Հայոց Թեմը և պարգևի նորանոր ձեռքբերումներ՝ ի փառս Աստուծոյ և ի զօրացումն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ և ընդ ամենեսեանդ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 22-ն Մայիսի
յամի Տեառն 2019 և ի թուին հայոց ՌՆԿԸ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 1950